# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/2-1/2019
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

**ք. Երևան** **<<29>> հունվարի 2019թ.**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս.Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Գասպարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից,հիմք ընդունելով 2016 թ. Հունվարի 12-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/2-1 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Արաքս գետի վրայի Մեղրիի կամրջի պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 10 043 200 (տաս միլիոն քառասուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

2.3 Դեկտեմբեր ամսվա համար նախատեսված վճարումները կատավում է մինչև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնումների մասով ստանձնած պարտավորությունների կատարման համար նախատեսված վճարումների վերջնաժամկետը:

## 3. Պայմանագրի 2.4 կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

<<2.4.4 Կատարողը պարտավոր է.

Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել.

1. կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրասպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին պատահարի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից>>:

**4. Այլ պայմաններ**

4.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.4Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**5.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ [illegible]

(ստորագրություն)

Հավելված 1
<<23>> հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/2-1/2019 համաձայնագրի

# Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Գնումը՝ 2019թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| [redacted] | | | | | | |
| 1 | Հայաստանի Հանրապետության Արաքս գետի վրայի Մեղրիի կամրջի պահպանման աշխատանքների | 2,510,800,0 | 2,510,800,0 | 2,510,800,0 | 2,510,800,0 | 10,043,200,0 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012186
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/6
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ 09700228

(ստորագրություն)

Հավելված 2
<29> հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏՃԻԳ-16/2-1/2019 համաձայնագրի

## Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| | Ձեռքբերվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | Հայաստանի Հանրապետության Արաքս գետի վրայի Մեղրիի կամրջի պահպանման աշխատանքների | 2,510,800,0 | 2,510,800,0 | 2,510,800,0 | 5,021,600,0 | 5,021,600,0 | 5,021,600,0 | 7,532,400,0 | 7,532,400,0 | 7,532,400,0 | 10,043,200,0 | 10,043,200,0 | 10,043,200,0 | 10,043,200,0 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/6
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ 09700439

(ստորագրություն)